



<http://www.slaq.am/arm/news/>

Հայաստանում քննարկում են վերականգնվող էներգետիկայի զարգացման ներուժը

25.06.11 13:43

Աղվերանում ընթանում են Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման ձեռնարկ ծրագրի քննարկումները: Քննարկումներին մասնակցում են Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների

նախարարության, Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի ներկայացուցիչները, ինչպես նաև շահագրգիռ կողմերը:

«Ծրագրի նպատակն է պարզել, թե վերականգնվող էներգիայի ինչ ներուժ ունի Հայաստանը ինչպես տեխնիկական, այնպես էլ տնտեսական շահավետության տեսակետից», -ասել է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը: Միաժամանակ, նրա խոսքերով, ծրագիրը թույլ կտա որոշակի խնդիրներ և դրանց լուծման մեխանիզմներ առաջարկել կարճաժամկետ՝ մինչև 2013թ., միջնաժամկետ՝ մինչև 2015թ. և երկարաժամկետ՝ մինչև 2020թ. հեռանկարում, ինչը կարևոր է ներդրողների, առևտրային բանկերի, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև պետկառույցների համար, որոնք որոշումներ կայացնելիս կարող են օգտվել ձեռնարկ ծրագրում ներկայացված հաշվարկներից:

Քննարկման կազմակերպիչներն են Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի ու էներգախնայողության հիմնադրամը, Expo Media ցուցադրական կենտրոնը՝ Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աջակցությամբ: Քննարկումներն անցնում են Համաշխարհային բանկի վերականգնվող էներգետիկայի ծրագրի շրջանակներում:

Slaq.am - Լրատվական աղբյուր